ՀՈԳԵՀԱՆԳՍՏՅԱՆ ԱՐԱՐՈՂՈՒԹՅՈՒՆ ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆՈՒՄ

Վերջին երկու ամիսների ընթացքում Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցին հրաժեշտ տվեց չորս արժանավոր Սրբազան Հայրերի:

Փետրվարի 1-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածնում, հավարտ Ս. Պատարագի, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի հանդիսապետությամբ կատարվեց հոգեհանգստյան արարողություն՝ ի հիշատակ նորոգ հանգուցյալ եկեղեցականների՝ Եգիպտոսի հայոց թեմի առաջնորդ Տ. Զավեն արքեպիսկոպոս Չինչինյանի, Երուսաղեմի Սրբոց Հակոբյանց միաբանության անդամ Տ. Կյուրեղ եպիսկոպոս Գաբիկյանի, Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսության միաբաններ Տ. Սահակ արքեպիսկոպոս Այվազյանի և Տ. Մեսրոպ արքեպիսկոպոս Աշճյանի: